ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ԹԻՎ 01-13

«07» փետրվարի 2012Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱԼ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N3--Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ստացվել է Արմավիրի մարզպետարանում
Մուտքագրման թիվ 1249-12
«07» 02 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«_6_» փետրվարի 2012թ. թիվ 3 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 69-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Գյոզալյան Արմեն
2. Ազիզյան Կարապետ
3. Նովլուզյան Անդրանիկ
4. Տեր- Խաչատրյան Նիկոլայ
5. Դիլանյան Սերոբ
6. Գյոզալյան Մարտիրոս
7. Գնոյան Հովհաննես
8. Բարեղամյան Լևոն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

2012 թվականի փետրվարի 06
գ. Ոսկեհատ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N3- Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N3-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի պահանջներով՝ միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի փետրվարի 6 -ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N3--Ն ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի
N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ՈՍԿԵՀԱՏ գյուղական համայնքի 2011թ. վարչական բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 9272,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 9603,5 հազար դրամ կամ կատարվել է 103,6 %-ով, այդ թվում

1,Հողի հարկի պլանով նախատեսված 6572,7 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 6895,0 հազար դրամ կամ կատարվել է 104.9 %-ով:

2.Գույքահարկի պլանով նախատեսված 2700.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 2708,5 հազար դրամ կամ կատարվել է 100,3 %-ով:

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով նախատեսված 110.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 97.3 հազար դրամ, կամ կատարվել է 88.5 %-ով:

1. Տեղական տուրքերի գծով նախատեսված 110.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 97.3 հազար դրամ, կամ կատարվել է 88.5 %-ով:

3. ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 1582,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1421,0 հազար դրամ կամ կատարվել է 89,8 %-ով, այդ թվում՝

1. գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 150.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 151,6 հազար դրամ կամ կատարվել է 101.1 %-ով:

2. պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման գծով նախատեսված 600.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 300.0 հազար դրամ կամ կատարվել է 50.0 %-ով:

3. օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով (ուսման վարձ, ծնող վճար և այլն) նախատեսված 832հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 969,4 հազար դրամ կամ կատարվել է 116,5 %-ով:

4. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա, սուբվենցիա, այլ դրամաշնորհ) նախատեսված 35462,5 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 35462,5 հազար դրամ կամ կատարվել է 100.0%-ով

Ոսկեհատի գյուղական համայնքի 2011թ. վարչական բյուջեով նախատեսված 46427,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 46584,3հազար դրամ կամ կատարվել է 100,3%-ով:

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

1.Ոսկեհատի գյուղական համայնքի 2011թ. բյուջեի 01 խմբի ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով նախատեսված 38002,2 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 35601,8 հազար դրամ կամ կատարվել է 93,7 %-ով:

ա) տեղական ինքնակառավարում՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 37902,2 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 35580,2 հազար դրամ կամ կատարվել է 93,9 %-ով:

բ) ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ 01բաժին 3 խումբ 3դասով նախատեսված 100.0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 21,6 հազար դրամ կամ կատարվել է 21,6 %-ով:

2.Տնտեսական հարաբերություններ ծախսերի գործառնական դասակարգման 04բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 600,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 300,0 հազար դրամ կամ կատարվել է 50,0 %-ով:

3.Շրջակա միջավայրի պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 05բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 950,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 950,0 հազար դրամ կամ կատարվել է 1000,0 %-ով:

4.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 2200,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2200,0 հազար դրամ կամ կատարվել է 100,0 %-ով:

8. Սոցիալական պաշտպանություն ծախսերի գործառնական դասակարգման 10բաժին 0 խումբ 0դասով նախատեսված 3075,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2834,2 հազար դրամ կամ կատարվել է 92,2 %-ով:

2012թ. ընթացքում պահուստային ֆոնդը կազմել է 2000.0 հազար դրամ:

2011թ. բյուջեի վարչական բյուջեով նախատեսված 46827,2 հազար դրամի դիմաց

ծախսը կազմել է 41886,0 հազար դրամ կամ կատարվել է 89,4 %-ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

2011թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 28001,8 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1282,0 հազար դրամ կամ կատարվել է 4,6 %-ով, այդ թվում՝

1. տեղական ինքնակառավարում՝ 01բաժին 1 խումբ 1դասով նախատեսված 28001,8 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1282,0 հազար դրամ կամ կատարվել է 4,6 %-ով:

ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ

Ոսկեհատի գյուղական համայնքի բյուջեի տարեվերջի պակասորդը (դիֆիցիտը) նախատեսված 28001,8 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 31,818,0 հազար դրամ: